

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ  
<<Գյումրու թիվ 38 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ընտանեկան կոնֆլիկտների հոգեբանություն

Կատարող՝ Ռիտա Ռաֆիկի Խաչատրյան

<<Գյումրու թիվ 4 հմն. դպրոց>> ՊՈԱԿ, մաթեմատիկայի ուսուցչուհի

Ղեկավար՝ Կ. Ալեքսանյան

Գյումրի 2022թ.

## Բովանդակություն

Ներածություն-----	2
Ընտանիք, ընտանեկան բախումներ-----	3
Ընտանեկան կոնֆլիկտների տեսակները և պատճառները-----	5
Ընտանիքի համար ճգնաժամային շրջաններ-----	6
Ընտանեկան կոնֆլիկտները, դրանց ազդեցությունը երեխաների վրա-----	7
Ընտանեկան բռնություն-----	9
Ընտանիքուն առկա կոնֆլիկտները լուծելու ուղիները-----	12
Քեթրին Գոթլիբի մեթոդով սուր իրավիճակների լուծում-----	13
Եզրակացություն-----	18
Օգտագործված գրականություն-----	19

## Ներածություն

Չկա ընտանիք, որտեղ ժամանակ առ ժամանակ չլինի կոնֆլիկտներ:Գուցե իսկապես պատահական չէ մեծերի կողմից հնչող այն խոսքերը, որ եթե ընտանիքում չկան վիճաբանություններ,ապա այնտեղ ինչ – որ բան կարգին չէ : Ընտանեկան տարաձայնությունները թուլացնում են լարված մթնոլորտը, հասկանալ մեր կողքին ապրող մարդկանց տեսակետներն ու համոզմունքները: Ի վերջո տարաձայնությունները կարելի է դիտել իբրև <<նուրբ ազդակ>> որի միջոցով ստուգվում է ներընտանեկան կայունությունը: Սակայն առավել զգուշավոր պետք է լինել ընտանիքի այն անդամներին, ովքեր դեռևս մեծ կախվածության մեջ են գտնվում ընտանիքի առավել փորձառու անդամներից: Խոսքն իհարկե երեխաների մասին է ,որոնց հոգևոր և ֆիզիկական ճիշտ զարգացումն ու կայունությունը պետք է գերակա նպատակ լինի ընտանիքի բոլոր անդամների համար, և ուղենիշ ծնողների հարաբերությունները կարգավորելու գործընթացում:

### ԸՆՏԱՆԻՔ...

Ընտանիքն արժեք է , այն պետք է կառուցել փոխադարձ հարգանքի և հոգատարության հիման վրա:



© Can Stock Photo - csp10328449

## Ընտանիք, ընտանեկան բախումներ

Ընտանիքը որպես մարդկանց կայուն սոցիալական հանրություն, ունի բազմաթիվ տարիների պատմություն: Այն հասարակության տարր է, և կատարում է շատ կարևորագույն խնդիր՝ բնակչության թվի աճ, բազմացում: Կյանքի ռիթմը շատ է արագացել: Թվում է անընդհատ ինչ որ տեղ ենք շտապում, փորձում ենք հասցնել ամեն բան, վախենում ենք որ կուշանանք: Այս խելահեղ ռիթմում ամեն բան արագ է փոխվում: Բայց մի բան անփոփոխ է, ու որ ավելի կարևոր է անփոխարինելի է՝ Ընտանիքը: Ի վերջո՝ ոչինչ իմաստ չեր ունենա, եթե չլիներ ընտանիքը: Երևի ընտանիք բառի հոմանիշը սերն է, կյանքի իմաստը: Ընտանիքը յուրատեսակ արժեհամակարգ է, հպարտություն ու հարստություն: Որքան շահագրգիռ ենք ամուր պահել պաշտպանել մեր ընտանիքը, նույնքան նվիրվածությամբ ենք մտածում մեր երկիրը պահելու ու պաշտպանելու մասին: Ընտանիքը այն «<<լաբորատորիան >> է, որտեղ ձևավորվում է անձը: Եվ Ինչպես ասել է Լև Տոլստոյը՝ բոլոր երջանիկ ընտանիքները նման են իրար, և յուրաքանչյուր դժբախտ ընտանիք դժբախտ է յուրովի: Ընտանիքի ուսումնասիրությամբ մինչև վերջին ժամանակները զբաղվում էր բացառապես միայն սոցիոլոգիան, ստեղծվել էին ընտանիքի տեսական կոնցեպցիաներ՝ սոցիալական ֆունկցիաների, հասարակության այլ ինստիտուտների հետկապերի տեսանկյունից: Սակայն վերջին ժամանակներում մեծ հետաքրքրություն է նկատվում ընտանեկան գործառնության պրոբլեմների վերաբերյալ տարբեր գիտությունների կողմից՝ ազգագրության, մանկավարժության, հոգեբուժության, հոգեբանության և այլն: Այս երևույթը բացատրվում է նրանով, որ ինչպես ցույց են տալիս սոցիոլոգիական հետազոտությունները, ընտանիքի դասական ինստիտուտը ճգնաժամ է ապրում համայն աշխարհում՝ կապված ամուսնական, ընտանեկան հարաբերությունների բովանդակության փոփոխման հետ, իսկ այն երկրներում, որտեղ սոցիալ-տնտեսական անկում է՝ ընտանիքի ճգնաժամը կրում է սպառնացող բնույթ: Ճգնաժամը արտահայտվում է նրանում, որ մի կողմից ընտանիքի նոր ձևեր գտնելու ուղիներ են որոնվում, որոնք ավելի լավ կհամապատասխանեն հարաբերությունների ժամանակակից բովանդակությանը: Ելակետային դերն

ամուսնական հարաբերություններում խաղում են ամուսնական կոնֆլիկտները: Հոգեբանները կարծում են ,որ ժամանակի ընթացքում կուտակված կամ ինքնաբերաբար առաջացած բացասական հույզերը ու զգացմունքները հակամարտության հիմք են հանդիսանում : Սակայն գրեթե միշտ ցանկացած թյուրիմացություն ,ցանկացած հակամարտություն կարող են լուծվել խաղաղ ճանապարհով, առանց վիրավորական խոսքի և բարձր հեկեկոցների:

## Ընտանեկան կոնֆլիկտների տեսակները և պատճառները

Գիտական-հոգեբանները պնդում են , որ մարդիկ անկախ տարիքից վիճում են միայն այն ժամանակ ,երբ չգիտեն ինչպես կարելի է դուրս գալ ներկա իրավիճակից: Ներկայում կոնֆլիկտները կարելի է բաժանել 3 խմբի

1. Մարդիկ հաճախ ցանկանում են իմանալ ինչ –որ տեղեկատվություն , բայց նախքան այս տեղեկատվության ստանալը ,պետք է լավ մտածել ,թե արդյոք այն իրոք անհրաժեշտ է ,թե ոչ:

2.Կոնֆլիկտները հաճախ միտված են վարքագծի փոփոխման հետ:

3.Հաճախ հակամարտությունը է անհրաժեշտ ,որ ցույց տալ թե ով է ավելի ուժեղ:

Ընտանիքի կոնֆլիկտների 1-ին պատճառը իշխանության ձգտումն է : 2-ը մեղքն է: Իհարկե ցանկացած մարդ կարող է սխալվել , բայց բացարձակապես կատարված ամեն ինչի համար մեղքի անընդհատ զգացումը ոչ մի լավ բանի չի հանգեցնի: 3-ը վրեժխնդրության զգացումն է : Երբեմն կոնֆլիկտ է ծագում այն բանի պատճառով , որ ինչ որ մեկը ցանկանում է բարելավել իր վրեժխնդրության զգացմունքները: Հաճախ ընտանիքում ոչ միայն ամուսիններն են վրեժ լուծում միմյանցից , այլև երեխաները ծնողներից , իսկ ծնողները երեխաներից: Ամենավատը այն է , որ նման ընտանիքներում երեխաների մոտ ձևավորվում է վարքի ոչ ճիշտ կարծրատիպ: Այս իրավիճակում թերևս ամենալավը ներելն է : Որովհետև եթե դա տեղի չունենա ,ապա ընտանիքը դատապարտված է և, անկասկած կփլուզվի:

## Ընտանիքի համար ճգնաժամային շրջաններ

Փորձագետների կարծիքով ՝ ընտանեկան հարաբերությունների զարգացման գործում կան մի քանի ճգնաժամային ժամանակաշրջան.

- Ամուսնության 1 -ին տարում ,որը կապված է ամուսինների միմյանց կախվածության հետ
- Մեկ այլ ճգնաժամ կապված է երեխաների լույս աշխարհ գալու հետ:
- 3-ը տեղի է ունենում 10-15 տարվա ամուսնությունից հետո :Դրա հիմքը կարող է լինել զգացմունքների մարում: Ծնողների և երեխաների միջև հակասությունները
- 4-դ ճգնաժամը ամուսնությունից 20 տարի հետո,որը կրում է ինվոլյուցիոն շրջան:

Ընտանիքում հակամարտությունը հաճախ արդարության զգացումն է: Օրինակ արդյոք արդար է ,որ ես պետք է գումար վաստակեմ իմ արձակուրդի հաշվին : Արդյոք արդար է ,որ ես պիտի մաքրություն անեմ և այլն: Ընտանիքում կոնֆլիկտների պատճառներից մեկը ցանկացած պատճառով մրցակցությունն է:Սա առաջնորդության ձգտման ձևերից է: Ընտանեկան կոնֆլիկտներ կարող են առաջանալ բարկությունից կամ դառնության զգացումից: Այս զգացմունքները ավերում են մարդուն, իլում էներգիան և ստեղծում ճնշման մթնոլորտ: Զայրույթը առաջացնում է պասիվ կամ ակտիվ ագրեսիա: Կոնֆլիկտը կարող է ծնել եսակենտրոնություն, որը կարող է առաջացնել ընտանիքի մյուս անդամների գրգռվածությունը ,վրդովմունքը: Շատ հավանական է , որ այս դեպքում հոգեթերապևտի օգնության կարիքը է անհրաժեշտ:

## Ընտանեկան կոնֆլիկտները, դրանց ազդեցությունը երեխաների վրա

Ընտանեկան փոփոխությունները փոխում են երեխայի վարքը, երբեմն ,դարձնում ագրեսիվ ,երբեմն` ինքնամփոփ կամ ինքնուրույն: Ընտանիքի կայուն համակարգի բաժանումը առաջացնում է այնպիսի խնդիրներ ինչպիսիք են`

- Եկամտի փոփոխություն
- Ցածր վարքանշային ընտանեկան մթնոլորտ: Ծնող- երեխա հարաբերությունների արագ անկում :
- Կրթության անցում հետին պլան հանուն նյութաֆինանսական միջոցների հայթայթման:

Երեխաների դաստիարակության գործում ի հայտ եկող խնդիրները պայմանավորված են ոչ միայն ընտանեկան բաժանումներով ,այլև ծնողների զբաղվածության մակարդակի աճով:

Շատ դեպքերում ընտանեկան անտարբերությունը ծնում է նոր կոնֆլիկտ, որը ստանում է շարունակական բնույթ: Դա երեխաների մոտ առաջացնում է զայրույթ ,տխրություն ,անհանգստություն, առողջական խնդիրներ, որոնց մասին նրանք դադարում են բարձրաձայնել կարծելով ,որ այդ պահին կան ավելի կարևոր խնդիրներ: Հատկանշական է քնի խանգարում ու դպրոցում կենտրոնանալու դժվարությունները: Աստիճանաբար առաջ են գալիս անտարբերություն, անվստահություն զիտության, սպորտի նկատմամբ հետաքրքրության նվազում : Կարող է այդ բոլորը արտահայտվել ագրեսիայի, նախանձի , թշնամանքի, հանցագործության դրսևորումներով: Կոնֆլիկտային ընտանիքների երեխաները խնդիրներ են ունենում միանձնային հարաբերություններում, դժվարանում են լուծումներ գտնել և շատ անգամ դրանք փնտրում են վատ միջավայր: Այս ամենը նպաստում է այն բանին ,որ երեխան բացասաբար է ընկալում սոցիալական միջավայրը , ունենում է վատ տպավորություններ և պատկերացումներ ընտանեկան հարաբերությունների և արժեքների մասին:

Հատկանշական է ,որ առաջանում է որոշակի ֆիզիոլոգիական ռեակցիաներ, որոնք կարող են վնասել ուղեղի զարգացմանը: Երեխան կարող է դիմադրել դրան, շնորհիվ



գենետիկական հատկանիշների կամ բարձր դիմադրողականության :Սակայն պետք է նշել,որ բոլոր դեպքերում ծնողների կոնֆլիկտները անդրադառնում է երեխայի ֆիզիկական զարգացմանու հոգեկերտվածքի ձևավորման վրա:Շատ կարևոր է ներընտանեկան խնդիրների հաղթահարումը համատեղել ջանքերով:

Ընտանեկան հակամարտությունը ծագում է ընտանիքի տարբեր անդամների տեսակետների,համոզմունքների բախումից,որի արդյունքում կողմերը գալիս են սխալ եզրակացությունների:Հատուկենտ դեպքերում ,կոնֆլիկտը կարող է նաև դրական ազդեցություն ունենալ բարձրացնելով ասենք երեխայի իրավագիտակցությունը: Ծնողների միջև ծագած կոնֆլիկտի արդյունքում երեխայի մոտ կարող է առաջանալ վախի զգացում :Սա նկատվում է այն ժամանակ, երբ երեխան ականատես է լինում ծնողների վեճերին կամ բռնության տեսարաններին:

Հարկ է նշել ,որ որոշ երեխաների համար կոնֆլիկտը դառնում է սովորական երևույթ: Դրսևորում են անտարբերություն,դառնում են սառնասիրտ ,ձեռք են բերում բնավորության բացասական գծեր: Թույլ են տալիս անընդունելի արարքներ:



## Ընտանիքուն առկա կոնֆլիկտները լուծելու ուղիները

Կոնֆլիկտի հաղթահարման համար հարկավոր է իմանալ ,որ

- Պետք է գատել խնդիրը մարդուց
- Միշտ սպասել և միայն որոշ ժամանակ անց դատել սառը գլխով
- Հիշել ,որ գաղափարը կայանում է ոչ թե շահելու,այլ հակամարտությունն ի վերջո լուծելու մեջ
- Հիշել ,որ մյուս կողմում անձ է,ով պարտավոր չէ համաձայնել դիմացինի ամեն բանի հետ
- Պետք է սահմանել խնդիրը և երբեք չշեղվել այլ հարցերի ուղղությամբ:
- Պետք է խոսել ցածրաձայն, հստակ և ողջամիտ:
- Հիշել ,որ խելացի մարդը միշտ կարող է ելք գտնել :
- Պետք է կարևորություն տալ ընտանեկան ավանդույթներին անկախ ստեղծված իրավիճակից: Երբեք չդադարեցնել երեխայի կրթության խիստ վերահսկողությունը,առողջ ժամանցը շփումը ընկերների հետ :
- Կազմակերպել բազմաժանր ֆիլմերի, երաժշտության ունկնդրում,որը խթանում է երեխայի առողջ դաստիարակության զարգացումը: Ապահովել ընտանիքի և երեխայի կայուն զարգացումը:

Ցանկանում եք կարգավորել հակամարտությունը սովորեք հանձնվել ,իսկ հետո հնարավոր կլինի վերադառնալ ձեր նախքին դիրքին:Անհրաժեշտ է ընդհանուր լեզվի որոնում, բարի կամք:

Գոյություն ունեն ներոտիկ ընտանիքներ ,որտեղ նկատվում է տազնապայնության բարձր մակարդակ ,ագրեսիվություն:

Ճգնաժամային ընտանիքները այն ընտանիքներն են ,որտեղ ամուսինները թշնամաբար են տրամադրված, պրոբլեմային ,որտեղ առկա խնդիրների արդյունքում ընտանիքը հայտնվում է անկայուն վիճակում:

## Հակամարտությունը ընտանիքում

Ընտանիքում ծնողը կարող է կոնֆլիկտներ ունենալ տարբեր տարիքի երեխաների հետ: Պատճառը ծնողի `երեխայի տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները չգիտակցելն է դաստիարակողության ձևերի չտիրապետելը, նրան անկարող մարդ համարելը: Ճգնաժամը կարող է լարվածություն առաջացնել 3 տարեկանում և դեռահասության տարիքում:

Երեք տարեկան հասակում ճգնաժամի պատճառը երեխայի պահանջների և դրանց բավարարության միջև առաջացած հակասությունն է: Երեխաները այս տարիքում դառնում են համառ, կամակոր:

Մեծահասակները պետք է իմանան ,որ այս ճգնաժամը անցողիկ երևույթ է , և վկայում է այն մասին ,որ երեխան պատրաստվում է անցնել հաջորդ տարիքային փուլ: Մեծ թվով կոնֆլիկտներ են առաջանում դեռահասության շրջանում: Այս տարիքային փուլում առավել կարևոր է ընտանեկան ջերմ հարաբերությունները: Հաճախ է առաջանում <<Հայրեր և որդիներ >> խնդիրները: Դեռահասը սկսում է համեմատել <<Իդեալական>> ծնողի իր պատկերացումներն <<Իրական >> ծնողի հետ և տեսնում է ,որ հսկայական տարբերություն կա << Իդեալական >> և <<Իրական >> ծնողների միջև: Մյուս կողմից սկսում է իրեն մեծ համարել և պահանջել ,որ իրեն վերաբերվեն ինչպես մեծի: Ծնող-երեխա լարված հարաբերությունները հանգեցնում են նյարդայնության, բռնության դրսևորումներին: Ծնող –երեխա հարաբերություններում կոնֆլիկտներ են առաջանում նաև սխալ դաստիարակության պատճառով: Ծնողը միշտ ձգտում են երեխային դարձնել օրինակելի ,անթերի ` կիրառելով խիստ պատժամիջոցներ, կոպիտ վարվել ,քիչ խրախուսել ,երբեմն էլ դաժան վերաբերմունք դրսևորել : Ոչ տեղին պատիժները հանգեցնում են երկու ծայրահեղ դրսևորումների .1-ին դեպքում երեխան մեծանում է չարացած, ագրեսիվ դեպք անվստահ, բարդույթավորված: Փոքր տարիքում երեխայի ագրեսիվությունը դրսևորվում է նրանում ,որ երեխան սկսում է հանել տիկնիկի աչքերը, կոտրել խաղալիքները, պոկել ծաղիկները: Այնուհետև երեխայի ագրեսիվությունը դրսևորվում է շրջապատվող մարդկանց նկատմամբ: Երեխան

Ֆիզիկական ուժ է կիրառում իրենից թույլերի հանդեպ, փորձում է ճնշել նրանց նվաստացնել, ցավ պատճառել:

Երեխա-երեխա հարաբերություններում կոնֆլիկտի պատճառները մի քանիսն են : 1-ին պատճառը երեխաների հանդեպ ուշադրության պակասն է : Որպես կանոն ` ընտանիքում 2-րդ երեխայի ծնունդն առաջնեկի մեջ առաջացնում է անտեսված լինելու զգացողությունը, որն էլ կարող է վերածել ասելության ինչպես ծնողի , այնպես էլ քրոջ կամ եղբոր նկատմամբ: 2-րդ երեխայի ծնվելուց հետո ծնողը պետք է ավելի շատ ուշադիր լինի 1-ին երեխայի նկատմամբ:

Երեխա –երեխա հարաբերություններում կոնֆլիկտների առաջացման պատճառը ծնողի կողմից երեխաների միջև սեռային խտրականություն դնելն է: Հայկական ընտանիքներում նորմալ է տղա-աղջիկ երեխաներին բաժանել ծնողների միջև: Մայրը սովորաբար սիրում է տղա երեխային ` տալով նրան արտոնություններ , իսկ հայրերը նմանատիպ վերաբերմունք են դրսևորում աղջիկների հանդեպ: Բնականաբար ծնողների համար դժվար է անտարբեր մնալ չմիջամտել , երբ իրենց երեխաները վիճում են : Մեծահասակները համոզված են ,որ եթե նրանք չմիջամտեն ապա երեխաները կվիրավորեն միմյանց: Նրանք փորձում են հաշտեցնել վիճող կողմերին: Շատ հաճախ երեխաներից մեկը մնում է մեղավոր: Երեխաների միջև ընտանեկան բախումները միակ լուծումը նրանց անտեսելն է , թույլ տվեք որ ինքնուրույն լուծեն իրենց խնդիրները: Մտածեք ,որ նրանք պարզապես ուզում են գրավել մեծերի ուշադրությունը` նրանց ներգրավելով իրենց սեփական վեճերի մեջ:

## Ընտանեկան բռնություն

Երեխաների նկատմամբ բռնության երևույթների պատճառը բազմազան են ու պայմանավորված են ծնողի և երեխայի ընտանիքի և հասարակության ,ժողովրդագրական ու մշակութային առանձնահատկություններով:

Օրինակ ,հայկական ավանդական դաստիարակությունը բռնությունը խրախուսող տարրեր ունի,և երեխաների պատժելն ու նրանց նկատմամբ բռնությունը տարանջատված չեն: Ծնողները հաճախ բռնությունը բացատրում են ընտանիքում կարգ ու կանոն հաստատելու անհրաժեշտությամբ:Միայն խիստ դատապարտվում են այն դեպքերը,երբ ֆիզիկական ծանր վնասվածքներ կամ մահ է արձանագրվում: Մնացած դեպքերում հայ ընտանիքը փորձում է առաջ տանել <<իմ երեխան իմ սեփականությունն է >> վտանգավոր մտայնությունը:

Այս հարցում էական դեր ունի ծնող-երեխա փոխհարաբերությունների որակը: նրանք ,ովքեր անտեսում են իրենց երեխաներին բնութագրվում են ավելի բացասական համեմատած մյուս ծնողների հետ:Շատ երեխաներ կապված չեն իրենց ծնողների հետ :Այդ հանգամանքի գործոններից է ընտանիքի աղքատությունը,սոցիալական մեկուսացումը:

Այնուամենայնիվ անկախ այն հանգամանքից ,թե ինչ ձևով է կատարվում բռնությունը,այն ազդում է երեխայի ֆիզիկական,հոգեբանական ,սոցիալական և մտավոր զարգացման վրա:Դա է պատճառը ,որ մանկապատանեկան հոգեկան առողջության խնդիրներն աստիճանաբար հայտնվում են պետական և հասարակական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում ,քանի որ հատկապես անբարենպաստ ընտանիքներում դաստիարակվող երեխաները ,կարող են մեծ մտահոգություն պատճառել թե ընտանիքին ,և թե հասարակությանը: Եթե ընտանիքում հաստատված են աններդաշնակ հարաբերություններ երեխաների և ծնողների միջև, ապա դա կարող է երեխաների մոտ վարքային խանգարումների բերել,որը իր հերթին կարող է պայմանավորել երեխայի անձի ձևավորման որոշակի խանգարումներ: Այն

երեխաները ,որոնք տուժել են ընտանեկան բռնությունից , ավելի մեծ ռիսկի առաջ են կանգնած դեռահաս տարիքում հղիանալու,ակոհոլ և թմրամիջոցներ օգտագործելու ,դպրոցը լքելու տեսանկյուններից: Քանի որ ընտանեկան բռնությունը ուսուցանվող վարքագիծ է ,տղաները կարող են սովորել և օգտագործել վերահսկող վարքը իրենց քույրերի և նույնիսկ մայրերի նկատմամբ վաղ տարիքից:

Հայաստանում շատ են այն երեխաները,որոնք ապրում են վտանգավոր կամ խնդրային ընտանիքներում ,որտեղ կա թմրանյութից կախվածություն,բռնություն և անմիջական վտանգի առկայություն երեխայի կյանքի նկատմամբ:Այս պարագայում երեխաներին գոնե ժամանակավոր այդ ընտանիքներից հանելու համար անհրաժեշտ է դիմել դատարան ,որը երկար և դժվար գործընթաց է:Ոչ ոստիկանությունը,ոչ էլ սոցիալական ծառայությունները չունեն այդ իրավասությունը երեխայի տարհանելու խնդրային և վտանգավոր միջավայրից: Ընտանեկան բռնության օրենքը պահանջում է շտապ միջամտել ,երբ առկա է խելամիտ հիմք բռնության կրկնության կամ շարունակման անմիջական վտանգի համար:Սակայն իրավապահ մարմինները չունեն այդ գիտակցությունը կամ համապատասխան պատրաստվածությունը նման գնահատում անելու համար, և երեխայի լավագույն շահը ամբողջովին անտեսվում է:Երեխաների պաշտպանության ծառայությունը Հայաստանում հոգաբարձության և խնամակալության հանձնաժողովն է:

Ընտանեկան բռնության փաստը ինքնին որևէ սահմանափակում կամ պատժամիջոց չի նախատեսում բռնարարի նկատմամբ:Պետության առաջնահերթություններից պետք է լինի կարծրատիպերի դեմ պայքարը և իրազեկման աշխատանքների իրականացումը:Այդ նպատակով տեղեկացվածության ,իրավագիտակցության բարձրացման համար պետք է լայնածավալ իրազեկման աշխատանքներ իրականացվեն հասարակության տարբեր շերտերի շրջանում, որը պետք է ներառի

- Օրենսդրական դաշտի իրազեկում,իրավունքների վերականգնման մեխանիզմների վերաբերյալ դասընթացների կազմակերպում հասարակության տարբեր շերտերի համար

- Բռնության երևույթի վերաբերյալ քննարկումների կազմակերպում՝ գիտակցության բարձրացման ,բռնության վերացման նպատակով:
- Ընտանեկան բռնության ծառայությունների վերաբերյալ տեղեկացվածության բարձրացում:

### **Կոնֆլիկտների լուծման ուղիները**

Ամուսինների մեջ կոնֆլիկտների լուծումը կախված է այն բանից ,թե արդյոք նրանց միջև համատեղ կյանքը պայմանավորված է այնպիսի պահվածքով ,որը հիմնված է ներելու և զիջելու կարողությունների վրա:Վիճահարույց երկխոսությունը կառուցողական ավարտի հմնական պայմանը ոչ մի դեպքում չի կարող միմյանց նկատմամբ հաղթանակ նվաճել :Ի վերջո,հաղթանակը դժվար թե համարվի անձնական նվաճում ,եթե այն ձեռք է բերվում սիրելիի պարտության կամ վրդովմունքի միջոցով :Պետք է հիշել ,որ գույզըները արժանի է հարգանքի : Չպետք է խուսափել կոնֆլիկտներից ,այլ փորձել կառուցողականորեն լուծել այն: Անհրաժեշտ չէ ընտանիքի անդամներին ներքաշել հակամարտություններում: Պետք է հասկանալ ,որ ընտանեկան բարենպաստ միջավայրը կախված է միայն ամուսինների վարքից, նպատակներից և ցանկություններից ,և ոչ թե այլ անհատներից: Ընտանեկան կոնֆլիկտների լուծումը տեղի է ունենում տարբեր ձևերով, ինչը հանգեցնում է ինչպես հարաբերությունների հաստատմանը ,այնպես էլ դրանց ոչնչացմանը:Կոնֆլիկտների լուծման միջոցներից մեկը հանգեցնում է ընտանիքի խզմանը: Ամուսնալուծությանը նախորդում է մի գործընթաց ,որը ներառում է 3 փուլ : 1-ին փուլ հուզական ամուսնալուծությունն է ,որն իրեն դրսևորում է վստահության կորուստ ,սիրո կորուստ, անտարբերություն: 2-րդ փուլը ֆիզիկական ամուսնալուծությունն է, ինչը հանգեցնում է բաժանման:Վերջին փուլը օրինական ամուսնալուծությունն է : Շատ գույզեր այնքան են հոգնել,անվերջ վեճերից,որ տեսնում են խնդրի միակ լուծումը՝ ամուսնալուծությունը:Ոմանց համար դա փրկություն է թշնամությունից ,խաբեությունից: Կինը համարվում է առավել խոցելի ,քանի որ նա շատ ավելի հակված է նյարդահոգեբուժական խանգարումներին:Երեխաների համար

հետևանքները ավելի նշանակալից կլինեն համեմատած մեծահասակների հետ: Ընտանեկան խաղաղությունը պահպանելու համար ամուսինները պետք է իրենց վատ տրամադրվածությունը, խնդիրները թողնեն իրենց տնից դուրս և տուն բերեն միայն երջանկություն, ուրախություն լավատեսության մթնոլորտ: Միտո և ներդաշնակության մեջ միասին ապրելու համար անհրաժեշտ է միմյանց հասկանալ, սովորել հարմարվել, փորձել հաճեցնել միմյանց: Գնահատել փոքրիկ բաները: Աննշան բայց հաճախիկ անակնկալները, ուշադրության նշանները : Սովորենք ներել և մոռանալ վիրավորանքները, լինել ավելի հանդուրժող միմյանց նկատմամբ: Ի վերջո, բոլորը ամաչում են իրենց իսկ որոշ սխալներից և նրա համար տհաճ է հիշեցնել դրանք: Մի պարտադրեք ձեր սեփական պահանջները, փորձեք պաշտպանել զուգընկերոջ արժանապատվությունը: Վիճաբանության ընթացքում չպետք է անցնել վիրավորանքներին, պետք չէ հակառակորդին առավել վնաս հասցնել: Վիճաբանության արդյունքի դրական արդյունքը կախված է որոշակի պայմաններից:

- Տեղի է ունենում առանց երեխաների ներկայության
- Պատճառները հստակ ձևակերպված են հատուկ ցուցումներով
- Յուրաքնչուր կողմ պատրաստ է հանգիստ լսել մեկնաբանությունները իր վարքի վերաբերյալ
- Առաջատար հարցեր են արվում
- Ներկայացվում են հաշվիչ առաջարկներ, որը ընդունելի է մյուս կողմի համար:

### **Քեթրին Գոթլիբի մեթոդով սուր իրավիճակների լուծում**

Ընտանիքում կոնֆլիկտները լուծվում են Յան-Քեթրին Գոթլիբի մեթոդով՝ հաշվի առնելով արգելված մեթոդները:

- Մի ներողություն խնդրեք նախքան զուգընկերը գիտակցել ապաշխարության փաստը
- Կենտրոնանալ ինտիմ ոլորտի թերությունների վրա



- Անդրադառնալ այլ կոնֆլիկտների հետ կապված հարցերին ,և ոչ թե բանակցել
- Վշտացնել ,ձևացնելով թե համաձայն էք հակառակորդի հետ
- Քննադատել մեկ այլ մարդու առաջնահերթությունները
- Խաղալ կասկածելիության և անապահովության վրա

Միշտ կան հակամարտության հակառակ կողմերը: Ընդդիմադիր ,հակառակ կողմերն են մայրիկները,հայրիկները, տատիկները, պապիկները և այլն: Յուրաքնչուրը ունի իր տեսակետը:

Կոնֆլիկտային միջավայրում մեծացած երեխան հիմնականում այդպիսի միջավայր էլ ստեղծում է , քանի որ այլ տարբերակ չգիտի: Միգուցե նրա մտքում առաջանան երկու հակադիր պատկերացումներ <<ես կարող եմ մեծանալ ու շատ ջերմ ընտանիք ստեղծել>> կամ << իմ ստեղծած ընտանիքն էլ կարող է այսպես սառը դառնալ ,ավելի լավ է չկազմել ընդհանրապես>>:

Սովորենք հարգել միմյանց,լսել կարծիքներ և գտնել խնդիրների լուծման լավագույն տարբերակը: Սովորենք սիրել, պահպանել և գնահատել մարդկության համար անսահման թանկ հարստությունը` ընտանիքը:Պահենք և պահպանենք մեր ընտանիքները:

## Եզրակացություն

Վերլուծելով ընտանեկան կոնֆլիկտների առաջացման պատճառները, ձևերը և լուծման ուղիները, կարելի է գալ այն եզրակացության, որ հնարավորին չափ հարկավոր է խուսափել կոնֆլիկտայի իրավիճակներից, հատկապես երեխաների առկայության պարագայում:

Առավել ուշադիր պետք է լինել երեխաների հուզական ներաշխարհի կայունության պահպանման և ֆիզիկական զարգացման խնդիրներին:

Միշտ պետք է հավատարիմ մնալ բարեկամական տոնայնությանը:

Մշակել ներընտանեկան խնդիրները հմտորեն շրջանցելու տարբերակները: Եթե կոնֆլիկտների մասին լռելն անհնար է, ապա պետք է անպայման երեխային ասել ճշմարտությունը և լուծումներ փնտրել նրա հետ միասին:

Չի կարելի աղավաղել երեխաների մանկական հիշողությունները:



## Օգտագործված գրականության ցանկ

Ս.Ա. Սեդրակյան << Ընտանիքի հոգեբանություն>>

[https:// hy. Wikipedia. org wiki](https://hy.wikipedia.org/wiki) << Ընտանեկան կոնֆլիկտներ>>

[https:// www.academia. Edu](https://www.academia.edu)